ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՍՍՀ ՏՐԻԿՈՏԱԺ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1971—1980)

ԼԱՐԻՍԱ ՁԱՐԵԻՖԱԼԱՔՅԱՆ

Հայկական ՍՍՀ թեթև արդյունաբերությունը 1971—1980 թթ. բնութագրվեց թողարկվող համախառն արտադրանքի աճի բարձր տեմպերով։ Հաջողությունները հատկապես զգալի էին 10-րդ հնգամյակի տարիներին, որոնք բարձր գնահատվեցին ՀԿԿ XXVII համագումարում։ «Պլանով նախատեսված 37,4 տոկոսի դիմաց,— համագումարում նշեց Կ. Ս. Դեմիրճյանը,— թողարկվող արտադրանքի ծավալներն աճեցին 55,8 տոկոսով»[1]։ Ճյուղի արտադրանքի այդպիսի աճը հնարավոր դարձավ ներարտադրական ռեզերվներն օգտագործելու շնորհիվ։ 9-րդ, ինչպես և 10-րդ հնգամյակի տարիներին նշանակալի չափով բարձրացավ աշխատանքի և սարքավորումների արտադրողականությունը, շահագործման հանձնվեցին բարձր արտադրողականությամբ նոր սարքավորումներ, վերակառուցվեցին մի շարք ձեռնարկությունների արտադրամասեր։

Հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկությունների համախառն արտադրանքի աճի տեմպերը նշանակալիորեն գերազանցեցին թեթև արդյունաբերության աճի տեմպերը։ Թողարկվող արտադրանքի աճի բարձր տեմպեր ապահովեցին Երևանի և Լենինականի ֆաբրիկաները։ Սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տրիկոտաժ արդյունաբերության շատ ձեռնարկություններ դեռևս լրիվ չեն օգտագործում իրենց արտադրական հնարավորությունները։ Դա հատկապես վերաբերում է նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը։ Մինչդեռ, ինչպես նշեց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXVI համագումարում, «մեր հետագա առաջընթացն ավելի ու ավելի մեծ չափով կախված կլինի բոլոր առկա ռեսուրսների՝ աշխատանքի, հիմնական ֆոնդերի, վառելիքի և հումքի... հմուտ և արդյունավետ օգտագործումից»[2]։ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի «Հումքային, վառելիքաէներգետիկ և մյուս ռեսուրսների օգտագործման աշխատանքը ուժեղացնելու մասին» 1981 թ. որոշումը կոնկրետացրեց համագումարում առաջադրված խնդրի կոմպլեքս լուծման ուղիները[3]։ Ուստի, որպեսզի պարզենք հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկությունների զարգացման հնարավորությունները, վերլուծենք արտադրա-

---

1 Կ. Ս. Դեմիրճյան, ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, Երևան, 1981, էջ 11—12։

2 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1981, էջ 68։

3 «Սովետական Հայաստան», 4. VII. 1981։

կան ֆոնդերի, աշխատուժի և նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հետ կապված պրոբլեմները։

Հին արտադրական կարողությունների վերակառուցման և նորերի շահագործման հանձնելու հետևանքով տրիկոտաժ արդյունաբերության հիմնական ֆոնդերն արագորեն ավելացան։ 1971—1980 թթ. տրիկոտաժ արդյունաբերության արտադրական ֆոնդերն աճեցին 2,2 անգամ[4]։ Սակայն արտադրական ֆոնդերի դանդաղ և ոչ լրիվ շահագործման հանձնելու պատճառով, ինչպես նաև արգեն գործող արտադրական ֆոնդերի ոչ ռացիոնալ օգտագործման հետևանքով ֆոնդատվության աճը նշանակալիորեն ետ մնաց արտադրական ֆոնդերի աճի տեմպերից։ Ֆոնդատվությունը 1971 թ. 5,09-ի փոխարեն 1976 թ. կազմեց 4,58 ռ., իսկ 1976 թ. նկատմամբ 1980 թ. դրական տեղաշարժ տեղի չունեցավ։ Իհարկե, առանձին գործարաններում թողարկվող համախառն արտադրանքի և հիմնական ֆոնդերի աճի հարաբերակցությունը դրսևորվեց տարբեր չափերով։ Բերված տվյալները վկայում են, որ տրիկոտաժ արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետությունը դեռևս բարձր չէ։ Ավելին, տարեկան կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետությունը փաստորեն ավելի պակաս է, քան միջին ճյուղային ցուցանիշը։ Այդ պատճառով էլ կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության բարձրացման խնդիրները 11-րդ հնգամյակում ստանում են չափազանց կարևոր նշանակություն՝ հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության բոլոր ձեռնարկությունների համար։ Ինչպես ՍՄԿԿ XXVI համագումարում նշեց Ն. Ա. Տիխոնովը, «Տասնմեկերորդ հնգամյակի հանգուցային խնդիրներից մեկը հիմնական արտադրական ֆոնդերի ավելի լրիվ և արդյունավետ օգտագործումն է։ Դրանց աճը ընթանում է արագ տեմպերով, իսկ հարկ եղած փոխհատուցումը շատ դեպքերում մենք չենք ստանում»[5]։

Հիմնական արտադրական ֆոնդերի տնտեսական արդյունավետության բարձրացման կարևորագույն խնդիրներից է նաև գործող արտադրական սարքավորումների արտադրողականության և դրանց օգտագործման գործակցի բարձրացումը, որը ՍՍՀՄ լավագույն ձեռնարկությունների ցուցանիշներից ետ է մնում 1,1—1,6 անգամ։

Սոցիալիստական տնտեսության պայմաններում հիմնական արտադրական ֆոնդերի տնտեսական արդյունավետության բարձրացման գլխավոր պայմաններից մեկը դրանց կառուցվածքի հետագա բարելավումն է, այսինքն՝ այդ ֆոնդերում արտադրական սարքավորումների տեսակարար կշռի բարձրացումը։ Վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակում տրիկոտաժ արդյունաբերության շատ ձեռնարկությունների հիմնական արտադրական ֆոնդերի արժեքային կառուցվածքում նշանակալի փոփոխություններ տեղի չեն ունեցել, չնայած այդ ձեռնարկությունների տեխնիկական վերազինմանը և դրանցում առաջավոր տեխնոլոգիայի արմատավորմանը։ 1971—1980 թթ. տրի-

---

4 Տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկությունների գործունեությունը բնութագրող այս և հետագա թվական տվյալները բերված են ըստ ՀՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրության տարեկան ֆինանսատնտեսական հաշվետվությունների (1971—1980) նյութերի։

5 Ն. Ա. Տիխոնով, ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թվականների և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները, Երևան, 1981, էջ 23։

կոտաժ արդյունաբերության ձեռնարկությունների արտադրական սարքավորումների և մեքենաների ավելի քան երկու-երրորդը փոխարինվեցին նոր սարքավորումներով ու մեքենաներով։ Այնուամենայնիվ, տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկությունների արտադրական սարքավորումներն անհրաժեշտ է փոխարինել ավելի բարձր արտադրողականությամբ սարքավորումներով։ Դեռևս ցածր է բազմասիստեմային և շրջաֆանգային մեքենաների տեսակարար կշիռը՝ ՍՍՀՄ տրիկոտաժ արդյունաբերության առաջավոր ձեռնարկությունների համեմատությամբ։ Վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ մեքենաների տեսակարար կշիռը պետք է հասցնել մինչև 60%-ի, իսկ հենող մեքենաները փոխարինել այնպիսիներով, որոնց արագությունը կազմում է րոպեում 1000—1250 պտույտ։ Այս և մի շարք այլ միջոցառումներ կարող են նշանակալիորեն բարձրացնել հիմնական արտադրական ֆոնդերի ֆոնդատվության ցուցանիշը։

Նոր սարքավորումները և մեքենաները դանդաղ յուրացնելու և ոչ ռացիոնալ օգտագործելու հետևանքով հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության մեջ քննվող ժամանակաշրջանում չի ապահովվել համապատասխան տնտեսական արդյունավետություն։ Այսպես, Երևանի ձեռնոցների տրիկոտաժ արտադրական միավորման ձեռնարկություններում 1975—1977 թթ. տեղադրվել է 95 հարթաֆանգային մեքենա։ Այդ մեքենաների արտադրողականությունը կազմել է 0,5—1 միավոր/ժամ, այն դեպքում, երբ ՍՍՀՄ համապատասխան առաջավոր ձեռնարկություններում դրանց արտադրողականությունը կազմում է 1,3—1,6 միավոր/ժամ։

Հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկությունները լրիվ չեն օգտագործել այն հնարավորությունները, որ ստեղծվել է նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրմամբ։ Աշխատանքի արտադրողականությունը վերջին տասը տարվա ընթացքում աճել է միայն 1,5 անգամ։ Այսպես, 1975 թ. Լենինականի գուլպանասկեղենի արտադրական միավորումում 101 ապրանքանշի գուլպաների մեկ մեքենայի վրա մեկ ժամում աշխատանքի արտադրողականությունը կազմում էր 7 զույգ, այն դեպքում, երբ ՍՍՀՄ համապատասխան առաջավոր ձեռնարկություններում այն հասնում էր մինչև 9 զույգի, իսկ 138 ապրանքանշի համար՝ համապատասխանաբար 2,5 և 3,5 զույգ, իսկ 106 ապրանքանշի համար՝ 3,5 և 5,5 զույգ։ Ավելին, միավորումում կոտոնային մեքենաների արտադրողականությունը (չնայած 1,6 անգամ բարձրացել է) դեռևս 10—15%-ով ցածր է ՍՍՀՄ-ի միջճյուղային ցուցանիշներից։

Հաշվարկները ցույց են տալիս, որ տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում առանձին մեքենաների արտադրողականությունը միջին միութենական ցուցանիշներին հասցնելու համար անհրաժեշտ է դրանց արտադրողականությունը բարձրացնել 7—25%-ով։ Դրա հիման վրա լրացուցիչ արտադրվող արտադրանքի քանակը, ըստ տարբեր տեսակի մեքենաների, նշված է 1-ին աղյուսակում։

Եթե ՀՍՍՀ տրիկոտաժ արդյունաբերության մեջ մեխանիկական հաստոցները փոխարինվեն ավտոմատ գործվածքային հաստոցներով, ապա աշխատանքի արտադրողականությունը կբարձրանա 1,5—2 անգամ։ Տնտեսական բարձր արդյունավետություն է ապահովում նաև թելերի մեխանիկական հենումը, որը աշխատանքի արտադրողականությունը բարձրացնում է շուրջ 3 անգամ։ Ուստի, 11-րդ հնգամյակում տրիկոտաժ արդյունաբերության մեջ նա-

խատեսվում է մեխանիկական հաստոցները հիմնականում փոխարինել ավտոմատ գործվածքային հաստոցներով։ Նոր մեքենաները ոչ միայն կբարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը, այլև կկրճատեն հումքի վերամշակման ծախսերը։ Այսպես, մեխանիկական հաստոցների փոխարեն ավտոմատ հաստոցներով հումքը վերամշակելիս յուրաքանչյուր մեկ միավոր

Աղյուսակ № 1

Մեքենաների և սարքավորումների անվանումը	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	Ընդամենը արտադրանք
շրջագուլպանասկեղենի մեքենաներ	գուլպանասկեղեն արտադրանք	հազար զույգ	4800
հարթաֆանդային մեքենաներ	արտադրանք մեքենայից	հազար հատ	190
ԿՏ-1 մեքենաներ	արտադրանք մեքենայից	տոննա	48
կոանային մեքենաներ	գուլպանասկեղեն արտադրանք	հազար զույգ	212
շրջաֆանդային մեքենաներ	արտադրանքի թողարկում կուպոններով	հազար կուպոն	185
«Վերտելկա» տրիկոտաժային մեքենաներ	արտադրանք մեքենայից	տոննա	386
«Ինտերլոկ» տրիկոտաժային մեքենաներ	արտադրանք մեքենայից	տոննա	149
ՄՏ-1 մեքենաներ	արտադրանք մեքենայից	տոննա	157
ՄՍ և վանիտ բազմասիստեմային շրջատրիկոտաժային մեքենաներ	արտադրանք մեքենայից	տոննա	81

գործվածքի վրա ծախսերը կկրճատվեն 17%-ով։ Բացի այդ, նախատեսվում է արդեն գործող ավտոմատ սարքավորումների արդիականացում, որը նույնպես կնպաստի աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացմանը։ Այսպիսով, տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում տեխնիկական առաջադիմության տնտեսական արդյունավետության վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացումն աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմնական գործոնն է։

Մեծ մասշտաբի տնտեսում է ստացվում նաև հաստոցների սպասարկման նորմաների մեծացմամբ, որը հնարավոր է ապահովել ոչ միայն ավտոմատացման, այլև բանվորների որակավորումը բարձրացնելու և առաջավոր փորձը ներդնելու միջոցով։ Վերջին տասը տարվա ընթացքում հաստոցների սպասարկման նորման ավելացել է 1,4 անգամ, որը և ապահովել է մեկ բանվորի մեքենազինվածության աճը։ Այդ նույն ժամանակամիջոցում մեքենազինվածության ցուցանիշը մեծացել է 3,2 անգամ։ Նշված ցուցանիշների համեմատությունը վկայում է, որ սպասարկման նորմայի աճը զգալիորեն ետ է մնում մեքենազինվածության աճից, և որ տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում խոշոր ներարտադրական ռեզերվները դեռևս ռացիոնալ չեն օգտագործվում։ Մեքենազինվածության աճը զգալիորեն առաջ է անցել նաև աշխատանքի արտադրողականության աճից, որը բացատրվում է ինչպես

հիմնական արտադրության տեղամասերի ներարտադրական չօգտագործված ռեզերվներով, այնպես էլ օժանդակ արտադրամասերում աշխատանքի ցածր արտադրողականությամբ։

ՀՍՍՀ տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում օժանդակ բանվորների տեսակարար կշիռն ամբողջ բանվորների կազմում տատանվում է 23—31%-ի սահմաններում, իսկ ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը ճյուղի համար կազմում է 67%։

Տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում արտադրության փաստացի տնտեսական արդյունավետությունը հնարավոր է բարձրացնել, եթե վերացվի ավտոմատացված և ոչ ավտոմատացված արտադրամասերի կարողությունների անհամամասնությունը։ Այս պայմաններում ավտոմատացված արտադրության արտադրական կարողությունները լրիվ կօգտագործվեն։

Արտադրության տնտեսական արդյունավետությունը կբարձրանա ոչ միայն հիմնական արտադրության մեջ նորագույն տեխնիկա ներդնելով, այլև օժանդակ արտադրության մեջ ներարտադրական ռեզերվներն օգտագործելով։ Հիմնական արտադրական տեղամասերում արտադրական նոր սարքավորումներ տեղադրելու հետևանքով հիմնական և օժանդակ արտադրության մեքենայացման ներկայումս գոյություն ունեցող մակարդակների տարբերությունը է՛լ ավելի կմեծանա, ուստի դա հաղթահարելու և արդյունաբերության խոշոր ռեզերվներն իրացնելու համար նախատեսվում է մեքենայացնել օժանդակ արտադրության մեջ գոյություն ունեցող ձեռքի աշխատանքը։ 11-րդ հնգամյակում օժանդակ արտադրության մեքենայացման հետևանքով տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում հնարավոր կլինի միջին հաշվով 750—850 բանվորի տեղափոխել արտադրության հիմնական տեղամասերում աշխատելու։ Բացի այդ, դա զգալի չափով կնպաստի օժանդակ արտադրության բանվորների աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։

Հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման խոշոր ռեզերվներ կան բանվորական ուժի ռացիոնալ, խնայողաբար օգտագործման բնագավառում։ Շատ ձեռնարկություններում հիմնական մասնագիտությունների գծով բանվորների պատրաստման գործը դրված է բավարար հիմքերի վրա, չնայած այդ գործում դեռևս կան մի շարք չլուծված կարևոր խնդիրներ։ Մասնավորապես խախտվում են ուսուցման ժամկետները, քիչ են տեսական պարապմունքները և այլն։ Բանվորների պատրաստումը հիմնականում տեղի է ունենում առանց արտադրությունից կտրվելու, որը զգալի դժվարություններ է ստեղծում հատկապես այն ձեռնարկությունների համար, որոնք բավարար չափով ընդարձակում են արտադրության ծավալը։ Այս պայմաններում բանվորների անհատական ուսուցման թերությունն այն է, որ նրանք իրենց վարպետներից փոխառնում են ոչ միայն ռացիոնալ, այլև ոչ ռացիոնալ գործառնություններ, որոնցից զերծ չեն նույնիսկ ամենաբարձր որակավորում ունեցող վարպետ-դաստիարակները։

Տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում ներարտադրական ռեզերվները հնարավոր է օգտագործել ոչ միայն բանվորական նոր կադրերի պատրաստման, այլև արտադրության մեջ աշխատող բանվորների որակավորման բարձրացման միջոցով։ Այդ խնդիրների լուծման կարևոր նախադրյալը բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակի հետագա բարձրա-

ցումն է, որը նախատեսվում է ձեռնարկությունների սոցիալական զարգացման կոմպլեքսային պլաններում։ Այս տեսանկյունից խիստ նպատակահարմար է ՍՍՀՄ թեթև արդյունաբերության առաջավոր ձեռնարկությունների արտադրական փորձի ուսումնասիրությունը, որը հնարավորություն կտա կոլեկտիվի սոցիալական զարգացման պլանները կազմել ավելի բազմակողմանիորեն և բարձր մակարդակով։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված բնագավառում մեր հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկությունները դեռևս ետ են մնում ժամանակի հրամայական պահանջներից։

Ներկայումս, երբ կոմունիստական կուսակցությունը և սովետական պետությունն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ժողովրդի կենսամակարդակի անշեղ բարձրացմանը, այն համարելով մեր երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գլխավոր նպատակը, վճռական նշանակություն են ստանում նաև բանվորների մասնագիտական և կուլտուր-տեխնիկական ընդհանուր մակարդակի բարձրացման հարցերը։ Դրանց լուծումը հնարավորություն կտա ռեալ պայքար ծավալել բանվորական ժամանակն առավել ռացիոնալ օգտագործելու համար։ Բանվորական աշխատաժամի ռացիոնալ օգտագործման ամենահիմնական խնդիրներից մեկը բանվորական տեղերում, տեղամասերում և ամբողջ ձեռնարկության մասշտաբով արտադրության ու աշխատանքի ռացիոնալ կազմակերպումն է, որն անմիջականորեն կապված է արտադրության մասնագիտացման, համակենտրոնացման, ինչպես նաև աշխատանքի տեխնիկական նորմավորման բնագավառում տեղ գտած թերությունների վերացման հետ։ Նշված խնդիրների կոմպլեքսային լուծումն էլ հենց նշանակում է հոգատար, խնայողական վերաբերմունք ցուցաբերել աշխատանքային ռեսուրսների նկատմամբ, մի բան, որը կուսակցության XXVI համագումարի կոնկրետ պահանջն է։ «80-ական թվականների պայմաններում,— համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը,— հատուկ նշանակություն է ստանում աշխատանքային ռեսուրսների նկատմամբ հոգատար, խնայողական վերաբերմունքը։ Դա բարդ գործ է, որը պահանջում է տնտեսական, տեխնիկական, սոցիալական, դաստիարակչական բնույթի շատ խնդիրների լուծում»[6]։

Հանրապետության թեթև արդյունաբերության մինիստրությունը մշակել է համապատասխան միջոցառումներ՝ տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկությունների առարկայական և տեխնոլոգիական մասնագիտացումը խորացնելու ուղղությամբ։ Այդ միջոցառումների հիմնական նպատակը նույնանման տեխնոլոգիայով արտադրվող գործվածքները համապատասխան ձեռնարկություններում կենտրոնացնելն է, որը կապահովի ոչ միայն արտադրության արդյունավետության բարձրացումը, այլև՝ արտադրության ռացիոնալ կազմակերպումը։ Տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում տեխնիկական հիմնավորված նորմաները (խոսքը ճյուղային նորմաների մասին է) կազմում են ընդամենը 28%։ Ուստի, անհրաժեշտ է միջոցներ մշակել տեխնիկապես հիմնավորված նորմաների տեսակարար կշիռը մեծացնելու ուղղությամբ։

---

6 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1981, էջ 67։

Աշխատանքի նորմատիվային պլանավորումը կպահանջի բարձր հիմքերի վրա դնել տեխնիկապես հիմնավորված նորմաների լայն կիրառումը։ Բանն այն է, որ տրիկոտաժ արդյունաբերության մեջ դեռևս նշանակալի խզում կա տեխնիկապես հիմնավորված պլանային և փաստացի նորմաների մակարդակների միջև։

Արտադրության մեջ նոր տեխնիկայի ներդրումը, արտադրության և աշխատանքի ռացիոնալ կազմակերպումը, բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը հնարավորություն կտան տրիկոտաժ արդյունաբերության մեջ լայնորեն կիրառելու ճյուղային տեխնիկապես հիմնավորված նորմաներ։ Վերլուծությունը ցույց է տալիս, որ տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում, որպես կանոն, նոր յուրացվող գործվածքի համար սահմանվում են ժամանակավոր նորմաներ, որոնք երկար ժամանակ չեն վերանայվում։ Այդպիսի նորմաների տեսակարար կշիռը տատանվում է 8—17%-ի սահմաններում։ Տրիկոտաժ արդյունաբերության մեջ տեխնիկապես հիմնավորված նորմաների կիրառման շրջանակի մեծացումը կապված է առաջավոր փորձի լայն կիրառման հետ։ Այդ հարցի կարևորությունը հաստատում են հետևյալ տվյալները։ Լենինականի տրիկոտաժ ֆաբրիկայում ուսումնասիրել ենք 80 բանվորի կողմից մանվածքի կտրվածքի վերացման տեվողությունը։ Նրանցից 23-ը այդ գործողության վրա ծախսել են 60 վայրկյան, 32-ը՝ 55 վայրկյան, 16-ը՝ 50 վայրկյան, իսկ 9-ը՝ 50 վայրկյանից պակաս։ Տրիկոտաժ արդյունաբերության համար մանվածքի կտրվածքի վերացման տևողության պակասեցումը կարևոր նշանակություն ունի, մինչդեռ Հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում մանվածքի կտրվածքի տևողությունը զգալիորեն բարձր է նորմայից։ Եթե այն հասցվի սահմանված չափի, ապա տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում աշխատանքի արտադրողականությունը հնարավոր կլինի բարձրացնել 12—20%-ով։

Տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման կարևոր դրդիչներից է նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը։ Այս հարցը վերլուծելու համար նախընտրել ենք արտադրանքի ինքնարժեքի ցուցանիշի ուսումնասիրությունը։ Հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում արտադրանքի թողարկման ծախսերի չորս-հինգերորդը կազմում են նյութական ծախսերը։ Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ արտադրության զարգացմանը զուգընթաց ապրանքային արտադրանքի ինքնարժեքի մեջ այդ ռեսուրսների տեսակարար կշիռը, ճիշտ է դանդաղ, բայց անընդհատ մեծանում է։ Նման պայմաններում աննշան փոփոխության է ենթարկվում միավոր արտադրանքի ինքնարժեքը։ Այսպես, տրիկոտաժ արդյունաբերության ապրանքային արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող ծախսերը 1974 թ. մինչև 1980 թ. 0,93 կոպեկից իջան և կազմեցին 0,92 կոպեկ։ Տնտեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ փաստորեն մեկ ռուբլու ապրանքային արտադրանքի ինքնարժեքը ավելի է իջել, քան ցույց են տալիս ձեռնարկությունների հաշվապահությունների տվյալները։ Օրինակ, 1975 թ. որոշ կատեգորիայի աշխատավորների աշխատավարձը բարձրացնելու հետևանքով թեթև արդյունաբերության ապրանքային արտադրանքի ինքնարժեքը նախատեսվածի համեմատությամբ ավելացվեց 0,3, իսկ 1976 թ.՝ 0,8%-ով։ Ապրանքային արտա-

դրանքի ինքնարժեքն աճել է նաև նյութական ռեսուրսների առանձին տեսակների գների փոփոխման, ինչպես նաև նոր ստանդարտներ հաստատելու հետևանքով։ Այս տեսակետից բնորոշ է Երևանի ձեռնոցների տրիկոտաժ արտադրական միավորման օրինակը. միավորումը 1975 թ. շահութաբեր էր, իսկ 1976 թ. աշխատեց վնասով։ Դա տեղի ունեցավ հետևյալ պատճառով. աշխատավարձի ֆոնդը տարեկան ավելացավ 202 հազ. ռ., իսկ ձեռնոցների արտադրության նոր տեխնիկական պայմանները ևս տարեկան 87 հազ. ռ. ավելացրեցին նյութական ծախսերը։ Մինչդեռ, 1975 թ. ձեռնոցների տրիկոտաժ արտադրական միավորումը ապահովում էր տարեկան 139 հազ. ռ. շահույթ։

Տրիկոտաժ արդյունաբերության մեջ ներարտադրական ռեզերվների օգտագործման հիմնական պայմաններից մեկն ինքնարժեքի պլանավորման ու գնահատման մեթոդների կատարելագործումն է։ Առաջին հերթին անհրաժեշտ է ճիշտ հաշվարկել տեսականու փոփոխման ազդեցությունն արտադրանքի ինքնարժեքի վրա, որը դեռևս անբավարար է կատարվում։ Աղյուսակ 2-ում, որպես օրինակ, տրվում են տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում 1976—1977 թթ. արտադրատեսակների փոփոխման ազդեցության հաշվարկները։

Ինչպես երևում է աղյուսակ № 2-ի տվյալներից, տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում միայն արտադրատեսակների փոփոխման հետևանքով 1976 թ. արտադրանքի ինքնարժեքն աճել է 3, իսկ 1977 թ.՝ 2%-ով։ Սա ցույց է տալիս, որ արտադրատեսակների փոփոխման հաշվարկները տրիկոտաժ արդյունաբերության մեջ, մեր կարծիքով, ունեն կարևոր նշանակություն և հնարավորություն են տալիս ճիշտ որոշելու տեխնիկական առաջադիմության ու ինքնարժեքի իջեցման, ինչպես նաև այլ գործոնների փոխազդեցությունը։

Տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում արտադրատեսակների փոխազդեցությունը այժմ հաշվարկվում է ամբողջ ապրանքային արտադրանքի ինքնարժեքի փոփոխման մեծությունը որոշելիս։ Զափազանց կարևոր է այդպիսի հաշվարկներ կատարել նաև արտադրության նյութատարության, ֆոնդատարության և աշխատատարության ցուցանիշների վրա արտադրատեսակների փոխազդեցությունը որոշելիս։ Այսպիսի հաշվարկները հնարավորություն կտան ճիշտ պլանավորելու ձեռնարկությունների տնտեսական ցուցանիշները։ Այդ հաշվարկները հատկապես կարևոր նշանակություն ունեն ձեռնարկությունների նյութական խրախուսման ֆոնդերը կազմավորելու և սոցիալիստական մրցության արդյունքները գնահատելու ժամանակ։

Հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը ցույց է տալիս, որ, չնայած աշխատանքի արտադրողականության բարձրացման հետևանքով ապրանքային արտադրանքի ինքնարժեքի նշանակալի նվազմանը, նյութական ռեսուրսների կրճատումը դեռևս դանդաղ է տեղի ունենում։ Այս բնագավառում տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկությունները արտադրական խոշոր ռեսուրսներ ունեն։ Այդ են վկայում միութենական առաջավոր ձեռնարկությունների հետ հանրապետության ձեռնարկությունների նյութական ծախսերի համեմատական տվյալները։ Վերջիններս նույնատիպ արտադրանքի արտադրու-

Աղյուսակ № 2

Հայկական ՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրության տրիկոտաժ ձեռնարկությունների արտադրանքի տեսակային փոփոխությունների ազդեցությունը արտադրանքի ինքնարժեքի վրա (1976 և 1977 թթ.)

Ձեռնարկությունների անվանումը	ապրանքային արտադրանքն ըստ 1976 թ. պլանի (ըստ ինքնարժեքի)				ապրանքային արտադրանքը ըստ 1977 թ. պլանի (ըստ ինքնարժեքի)			
	1976 թ. փաստական (հազ. ռ.)	1976 թ. պլանը (հազ. ռ.)	տարբերությունը		1976 թ. փաստական (հազ. ռ.)	1977 թ. պլանը (հազ. ռ.)	տարբերությունը	
			տնտեսումը 1976 թ. 1975 թ. նկատմամբ (— հազ. ռ.)	գերածախսը 1976 թ. 1975 թ. նկատմամբ (+ հազ. ռ.)			տնտեսումը 1977 թ. 1976 թ. նկատմամբ (—)	գերածախսը 1977 թ. 1976 թ. նկատմամբ (+ հազ. ռ.)
Երևանի Մյասնիկյանի անվան տրիկոտաժ արտադրական միավորում	39956	41272	—	+1316	44844	45321	—	+477
Երևանի ձեռնոցների տրիկոտաժ արտադրական միավորում	6182	6389	—	+207	6804	6826	—	+22
Սովետաշենի տրիկոտաժ արտադրական միավորում	13060	14230	—	+1170	15763	15788	—	+25
Լենինականի զուլպանասկեղենի արտադրական միավորում	24768	25647	—	+879	27672	27873	—	+201
Գորիսի տրիկոտաժ ֆաբրիկա	4468	4595	—	+131	4914	4965	—	+51
Լենինականի տրիկոտաժ ֆաբրիկա	14459	14543	—	+94	15284	15735	—	+451
Կիրովականի տրիկոտաժ ֆաբրիկա	28542	28091	—451	—	41918	43735	—	+1817
ընդամենը	131435	134771	—451	+3871	157199	160243	—	+3044

թյան վրա ծախսում են 5—16%-ով ավել հիմնական և օժանդակ նյութեր։ Քանի որ հիմնական նյութերը և կիսաֆաբրիկատները տրիկոտաժ արդյունաբերության մեջ կազմում են ապրանքային ամբողջ ինքնարժեքի 80—90%-ը, ապա դրանց կրճատումը դառնում է ինքնարժեքի իջեցման ամենակարևոր գործոնը։

Խնայողության ռեժիմը, որը ժողովրդական տնտեսության մեջ միշտ էլ խոշոր նշանակություն է ունեցել, այժմ է՛լ ավելի կարևոր է դառնում, քանի որ մեծանում է ինչպես հումքի պահանջը, այնպես էլ թանկանում է նրա արտադրությունը՝ կապված որակի բարձրացման հետ։ Ինչպես նշեց Լ. Ի. Բրեժնևը ՍՄԿԿ XXVI համագումարում, «տնտեսական քաղաքականության առանցքը դառնում է, թվում է, թե մի հասարակ և շատ առօրեական գործ՝ հոգատար վերաբերմունքը հանրային բարիքի նկատմամբ, այն ամենը լիովին, նպատակահարմար կերպով օգտագործելու ունակությունը, ինչ մեզ մոտ կա...

Էկոնոմիկան պետք է լինի խնայողական՝ այսպիսին է ժամանակի պահանջը»[7]։

Հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում տեխնիկական բազմաթիվ միջոցներ են մշակվում՝ հիմնված օժանդակ նյութերի և կիսաֆաբրիկատների օգտագործման տեխնոլոգիան կատարելագործելու, ինչպես նաև արտադրության մեջ առավել արդյունավետ տեսակի նյութեր կիրառելու վրա։

Տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում կարևոր նշանակություն ունի արտադրանքի որակի բարձրացումը։ 10-րդ հնգամյակի տարիներին պետական որականիշ ունեցող արտադրանքի տեսակարար կշիռն ավելացավ 10 անգամ, իսկ արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ դրանց տեսակարար կշիռը հասավ 24,4%-ի[8]։

Այսպիսով, հանրապետության տրիկոտաժ արդյունաբերության ձեռնարկություններում ռեսուրսների օգտագործման վերլուծությունը թույլ է տալիս նշել, որ դրանցում տնտեսական արդյունավետության հետագա բարձրացումը սերտորեն առնչվում է ներարտադրական ռեզերվների հայտնաբերման և օգտագործման հետ։ Իսկ դա պայմանավորված է նյութական ռեսուրսների խնայողական օգտագործմամբ, աշխատանքի արտադրողականության աճով, ֆոնդատվության բարձրացմամբ։

АНАЛИЗ ИСПОЛЬЗОВАНИЯ РЕСУРСОВ НА ПРЕДПРИЯТИЯХ ТРИКОТАЖНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ АРМ. ССР (1971—1980)

ЛАРИСА ЧАРХИФАЛАКЯН

Резюме

Для выяснения возможностей дальнейшего развития трикотажной промышленности необходим анализ эффективного использования основных производственных фондов, материальных и трудовых ресурсов.

---

7 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 68։

8 Կ. Ս. Դեմիրճյան, ՀԿԿ կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, էջ 12։

Эффективное использование производственных фондов связано с повышением производительности производственного оборудования, с улучшением состава их активной части благодаря внедрению новой техники и технологии, их автоматизации.

Использование внутрипроизводственных резервов в трикотажной промышленности связано также с подготовкой новых рабочих кадров, с повышением их квалификации, культурно-производственного уровня, рациональной организации труда и производства в масштабе предприятия.

Оптимальное использование материальных ресурсов обусловлено, в первую очередь, экономией сырья и основных материалов. Важен вопрос влияния ассортиментных сдвигов на рациональное использование материальных ресурсов.